ամէնքը իմանան, թէ որ տեղ կարելի է քննութիւն տալ և օրինաւոր վկայագիր ստանալ երգեցողութեան ուսուցիչ լինելու համար։ Այս հանգամանքը նպաստել է երգեցողութեան յետամնացութեան մեր դպրոցներում։

Ե. Դպրոցների ծախքը։

93—94 ուսումնական տարում բոլոր դպրոցների ծախքը եղել է—90644 ռուբլի։

Զ. Վերաբացուած և նորաբաց դպրոցներ։

Վերաբացուել են նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներում 6 դպրոց, բացուել են տարուայ վերջը և այս ուսումնական տարում արդէն սկսել են ուսումն 6 դպրոցում։ բացուել էին, բայց թերի մնացին 4 դպրոց։

Բենիկ Վարդապետ։

—✠—

ԵՒՐՈՊԱՑԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ.

Վեհափառ Հայրապետն ազգիս զիջանելով Ռումանիոյ Սուլինայ քաղաքի Թաղական խորհրդոյ թախանձանաց, որ շատ ժամանակից ի վեր զրկուած էին հոգևոր մխիթարութիւնից, բարեհաճեց կարգել Արժանապատիւ Մկրտիչ վարդապետ Տէրունեանին այցելու հովիւ և քարոզիչ այն կողմերին, ինչպէս երևում է Հայրապետական կոնդակից Հայր Մկրտիչ պիտի շրջի Ռումանիոյ, Պուլկարիոյ բոլոր քաղաքներ, ուր որ գտնում են հայ գաղթականներ, և ի ստիպել հարկին կարող է շրջել արտաքոյ այս տեղերից դուրս գտնուած քաղաքներ, ուր որ բնակուում են մեր ազգայինները։ Ինքն լաւ գիտէ ֆրանսերէն լեզուն, հմուտ է անգլիականին, իսկ հայերէնի և թուրքերէնի մէջ ևս առաւել հմուտ և գիտակ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

ԲԱՂՈՒԱԾՔ ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Կոնդակ յանուն Կառավարչի Թեմին Արցախու Գարեգին վարդապետի Սաթունեան, Համարաւ 500. որով արտօնի նմա բանալ զերկուս օրիորդական դպրոցս ի Նիժ և ի Վարդաշէն գիւղըրայս վիճակին։

Կոնդակ յանուն Փոխ-Թեմակալին Երևանայ Գեր. Անանիա եպիսկոպոսի Համր. 533 որով արտօնի նմա բանալ օրիորդական դպրոց ի գաւթի Ս. Աստուածածնայ եկեղեցւոյն Երևանայ, որպէս պատրաստական մաս Ս. Գայիանեան դպրոցին։

Կոնդակ յանուն Գրիգոր քահանայի Տ. Գրիգորեան Վաղարշապատ գեղջ Համր. 567, որով կարգի նախագահ Հոգաբարձութեան երկսեռ դպրոցաց տեղւոյն։

Կոնդակ յանուն Ս. Սինոդի Համր. 580, որով պատուիրի անյապաղ տալ կազմել ի ձեռն Առաջնորդաց և Հոգևոր Առաջնոց զընդհանուր ցուցակ (շտատ) սրբազնագործ պաշտօնէից Հայ եկեղեցւոյ որք ի Ռուսիայ, առ ի մատուցանել Նորին Սրբութեան մինչ ցյառաջիկայ դեկտեմբեր ամիս։

Կոնդակ շրջաբերական առ առաջնորդս և կառավարիչս վիճակաց, որով պատուիրի յետ այսուառաքել զցուցակ ծառայութեան ստորագրեալ պաշտօնէիցն իւրեանց, որոց վասն միջնորդեն առ ի պարգևատրել։

Կոնդակ յանուն Ներսէս քահանայի Գամազեան Միաբանի Թանդոյեան Ս. Աստուածածին եկեղեցւոյ Տփխեաց (Կուկիոյ) Համր. 653, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական ըստ միջնորդագրութեան Տեսչի Երկրաչափական դպրոցին Տփխեաց, յորմէ երևի թէ չէ ցուցեալ արգելս ինչ ի կողմանէ Գեր. Առաջն. Գէորգ Արքեպիսկոպոսի Սուրէնեան։

Գրութիւն Վեհ. Կաթուղիկոսի առ Յովհաննէս եպիսկոպոս Տ. Յարութիւնեան միաբան Ս. Էջմիածնի։ Համր. 658, որով պատուիրի նմա ձեռնադրել ի Սևան երիս ընծայացուս 1. դպիր Սարգիս Փիլոյեան ի միաբանակցութիւն վանիցն Սևանայ, 2. դպիր Պետրոս Ալոյեան ի միաբան. Ս. Դանիէլ վանուց Կոփայ Բուլանըք գաւառին Մշոյ, ի կուսակրօն քահանայութիւն. և 3 ընծայացուն Սօլակ գեղջ Դարաչիչակայ զՅարութիւնն Տ. Մովսէսեան ի քահանայ սակս յիշեալ գեղջն։

Կոնդակ յանուն Յովսէփ վարդապետի Սարաճեան ի Դավրէժ Համր. 661, որով կարգի տեղապահ Առաջնորդութեան վիճակին Ատրպատականի ցնոր տնօրէնութիւն. և արտօնի նմա բանալ կեդրոնական դպրոց ի Սալմաստ գաւառի։

Կոնդակ յանուն Ստեփաննոսի Բագիկեան, բնակչի Նոր Բայազիտ աւանի, Համր. 691, որով շնորհի նմա տիտղոս «պատուաւոր Հոգաբարձուի» վասն անձնուէր և օգտաշատ ջանիցն նորա, որ յօգուտ երկսեռ դպրոցաց տեղւոյն ի բազում ամաց հետէ, ըստ վկայութեան Գեր. Փոխ. Թեմակալին Երևանայ Անանիա եպիսկոպոսի։

Կոնդակ յանուն բարեգործ. ընկերութեան Հայոց Փարիզու. Համր. 704, որով օրհնի զջանս նոցա որք ցուցանեն աղքատ ուսանողաց և տարագրելոց ժերազնէից ի Փարիզ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ.

1. ԵՂԻՑԻՆ Գօտիք ձեր պնդեալ ...: Կ. Վ. . . 349
2. ՍՈՒՐԲ Խաչը . . . Բարկէն . 321
3. ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ - Համաչնական . . .
Համաժողովը . . . Կ. Վ. . 324
4. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ 326

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

5. Սասանեան Տէրութեան պատ- . . .
մութիւն Թ. Նիշոլէ քէի . Թարգմ. Ն. Ք . 339
6. ՄՈՎՍԷՍ Կաղանկատուացւոյ Աղուանից . .
պատմութիւն .... (Շարունակելի) Խաչիկ Վ. . 333
7. ՆԱՄԱԿ Խմբագր. Մեսրովբ Արքեպիսկոպոս . 348

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ.

8 ՄԻՋՆԱԿԱՐԳ Դպրոցների համար ուսուցիչներ
պատրաստելու խնդիրը . Աբեղայ . . 349
9. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԵԿԱՆ. . Ն. Ք. . . 333
10. ՀՈՒԹՈՒԹԻՒՆ եւ Սամէլ հովիկ Ս. Հայկունի . 334
11. ՄԱՆՐԱԼՈՒՐՔ 364

ԱԶԴԱՅԻՆ.

12. Բարեկարգութիւն եւ բարեզարդութիւն . . 364
13. Վեհափառ Հայրապետի Ս. օծման տարեդարձը 362